ԿԱՐԾԻՔ

Տիգրան Սամվելի Միքայելյանի «Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսության, ներկայացված Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Երկրների տնտեսական առաջընթացի և նրանց միջև փոխշահավետ առևտրային հարաբերությունների ծավալման գործում տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքների կատարելագործման նշանակությունն անհերքելի իրողություն է: Ավելին, միջազգային տրանսպորտային ցանցի և լոգիստիկայի համապարփակ համակարգի ձևավորմանն առնչվող հիմնախնդիրների լուծումը ձեռք է բերել արմատական նշանակություն: Նշված հիմնախնդիրների լուծումը կորոշվի, առաջին հերթին, աշխարհում տեղի ունեցող քաղաքական, ռազմական, սոցիալ-տնտեսական գործընթթացների բարեհաջող ելքով, որում վճռական կլինեն շատ երկրների փոխգործակցության աշխարհաքաղաքական և տնտեսական խնդիրները:

Համաշխարհային արտադրական և տնտեսական զարգացման արդի ժամանակաշրջանը բնութագրվում է մրցակցային պայքարի զգալի սրմամբ, իսկ իրավիճակը հատկապես բարդանում է տեխնոլոգիական առջընթացի՝ որպես արտադրության առաջնային մրցակցային գործոնի դերի բարձրացմամբ: Տեխնոլոգիական առաջընթացը թափանցել է նաև տրանսպորտային ենթակառուցվածքների և լոգիստիկայի ոլորտ, դարձել է տարբեր երկրներում լոգիստիկայի արդյունավետության գնահատման չափանիշ: Պատահական չէ, որ վերջին տարիներին Համաշխարհային բանկի խումբը մշակել է լոգիստիկայի արդյունավետության համաթիվը (LPI), որի միջոցով գնահատվում են երկրների լոգիստիկայի արդյունավետության հիմնական չափանիշները և որոնք ներառում են, մասնավորապես, սահմանային հսկողության արդյունավետությունը, ենթակառուցվածքների որակը և ժամանակին ապրանքների մատակարարումները: Ներկայում լոգիստիկան դառնում է ավելի բազմակողմանի՝ ընդգրկելով նոր ոլորտներ, ինչպիսիք են «կանաչ» լոգիստիկան, զբաղվածությունը և այլն:

Զարգացող երկրների մեծ մասի, այդ թվում Հայաստանի Հանրապետության համար, լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացման չլուծված հիմնախնդիրները շարունակում են խոչընդոտել արտաքին շուկաների դիվերսիֆիկացմանը և հասանելիության ապահովմանը, սահմանային վերահսկողության համակարգերի բարեփոխմաը, ազգային արտադրողների միջազգային շուկա մուտք գործելուն: Լոգիստիկան ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են բեռնափոխադրումը, պահեստավորումը, փաթեթավորումը, մատակարարումը, գույքագրման կառավարումը, պատրաստի արտադրանքի բաշխումը և մաքսային ձևականությունների անցումը:
Սկզբունքային կարևոր նշանակություն է ձեռք բերում ոչ միայն արտադրության, տնտեսական գործունեության պլանավորման, կառավարման, կազմակերպման և վերահսկման ժամանակակից շուկայական ուղղվածություն ունեցող մեթոդների

մշակումը, այլև նոր լոգիստիկ կողմնորոշվածություն ունեցող հայեցակարգերի, ռիսկերի և անորոշության պայմաններում ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանն ուղղված պահուստների և գործոնների բացահայտման մոտեցումների մշակումը: Հայաստանի Հանրապետությունում վերոնշյալ հիմնախնդիրների բացահայտման ուսումնասիրությունը և դրանց լուծման ուղիների առաջադրումը պայմանավորում է գրախոսվող հետազոտության **արդիականությունը**:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը երկրների լոգիստիկ մրցունակության արտաքին մարտահրավերների բացահայտման, արտաքին առևտրի վրա դրա ազդեցության վերլուծության, լոգիստիկայի մրցակցային առավելությունների գնահատման հիման վրա համալիր մոտեցումների և առաջարկների մշակումն է, որոնց գործնական կիրառումը կնպաստի ՀՀ լոգիստիկ մրցունակության բարձրացմանը և արտաքին առևտրային հարաբերությունների խթանմանը: Այդ նպատակի իրագործման համար կարևորում ենք հետևյալ խնդիրների լուծումը՝

- ուսումնասիրել և վերլուծել լոգիստիկայի մրցունակության և արտաքին առևտրի փոխառնչությունների տեսամեթոդական հիմքերը,
- իրականացնել լոգիստիկ շղթաների միջազգային մրցունակության վերլուծություն արտաքին առևտրի խթանման համատեքստում,
- հետազոտել լոգիստիկ քաղաքականության միջազգային մրցունակության խթանման արտերկրյա փորձը,
- գնահատել լոգիստիկայի և մրցունակության միջազգայնացման գործընթացների իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում,
- վերլուծել ՀՀ արտաքին առևտրի առկա վիճակն ու լոգիստիկ հիմնախնդիրները,
- իրականացնել Հայաստանում լոգիստիկայի և ենթակառուցվածքների ազդեցության գործոնային հետազոտություն՝ տնտեսաչափական մոդելների կիրառմամբ,
- հետազոտել ՀՀ-ում լոգիստիկայի միջազգային մրցունակության բարձրացման հիմնական խոչընդոտները և մարտահրավերները,
- գնահատել ՀՀ արտաքին առևտրի քանակական և որակական զարգացման հեռանկարները՝ գրավիտացիոն մոդելի կիրառմամբ,
- նախանշել Հայաստանի լոգիստիկ ծայառությունների միջազգային մրցունակությանն ուղղված բարեփոխումների հիմնուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի արտաքին առևտրի լոգիստիկ հոսքերն են, իսկ հետազոտության առարկան՝ լոգիստիկ ենթակառուցվածքների մրցունակության բարձրացման ուղիները Հայաստանում:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության իրականացման մեթոդաբանական հիմքը երկրորդային տեղեկատվության հավաքագրման գործիքակազմի կիրառումն է:

Երկրորդային տեղեկատվության հավաքագրման համար հիմք են ծառայել հայազգի և արտասահմանցի տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմա-

կերպությունների մշակումները, դասական և ժամանակակից տնտեսագիտական տեսությունների հիմնադրույթները, տրանսպորտի և լոգիստիկայի ոլորտները կարգավորող միջազգային կոնվենցիաները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի պետական կառավարման մարմինների որոշումները, հաշվետվություններն ու ռազմավարական ծրագրերը, ԵԱՏՄ անդամ երկրների վիճակագրական մարմինների տվյալներ և այլն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Տեքստը կազմում է 135 էջ՝ առանց հավելվածների:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը և հրատապությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթ պարունակող դրույթները, մատնանշվել է դրանց գործնական նշանակությունը, արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Տեքստը կազմում է 135 էջ՝ առանց հավելվածների:

Ատենախոսության **Ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «**Լոգիստիկան որպես համաշխարհային տնտեսության զարգացման առանցքային շարժիչ**» գլխում ներկայացվել են լոգիստիկ մրցունակության և արտաքին առևտրի փոխառնչությունների տեսամեթոդական հիմքերը ու լոգիստիկ գործունեության կարգավորման մեխանիզմներն արտաքին առևտրում, ինչպես նաև իրականացվել լոգիստիկ շղթաների միջազգային մրցունակության վերլուծությունն արտաքին առևտրի խթանման համատեքստում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Լոգիստիկայի արդի վիճակն ու հիմնախնդիրները ՀՀ արտաքին առևտրի խթանման համատեքստում»** գլխում, հեղինակն ուսումնասիրել է Հայաստանի միջազգային մրցունակության և լոգիստիկ իրավիճակի համեմատական վերլուծությունը: Դիտարկվել է նաև ԵԱՏՄ-ի և տարածաշրջանի երկրների միջազգային մրցունակության և լոգիստիկ իրավիճակի առկա վիճակը, ՀՀ արտաքին առևտրի և լոգիստիկ համակարգի վերլուծությունների շնորհիվ վեր են հանվել ոլորտներին առնչվող խնդիրները և տրվել քանակական գնահատականներ: Գնահատվել է ՀՀ և այլ երկրների առևտրի հարաբերական կարևորությունը՝ ՀՀ արտաքին առևտրի ինտենսիվության համաթվի հաշվարկով: Հաշվարկվել է նաև ՀՀ, ԵԱՏՄ և տարածաշրջանի երկրների բեռնափոխադրումների արժեքները, ռեգրեսիոն վերլուծության հիման վրա՝ օգտագործելով OLS մոդելները, գնահատվել է լոգիստիկ համակարգի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«Լոգիստիկայի միջազգային մրցունակության բարելավման հիմնական առաջնահերթությունները՝ որպես ՀՀ արտաքին առեվտրի խթանում»** գլխում ներկայացվել են ՀՀ-ում լոգիստիկայի միջազգային մրցունակության բարձրացման հիմնական խոչընդոտները և մարտահրավերները, գրավիտացիոն մոդելի կիրառմամբ գնահատվել է ՀՀ արտաքին առևտրի քանակական և որակական զարգացման հեռանկարները և առանձնացվել Հայաստանի լոգիստիկ ծայառությունների միջազգային մրցունակությանն ուղղված բարեփոխումների հիմնուղիները:

Կատարվել են արժեքավոր առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվել է տեսագործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներում, որոնցից գիտական նորույթ են հետևյալները՝

1. Գնահատվել է ՀՀ և հիմնական առևտրային գործընկեր երկրների, այդ թվում ԵԱՏՄ, ինչպես նաև տարածաշրջանային այլ երկրների փոխադարձ առևտրի ինտենսիվությունը, ինչի արդյունքում բացահայտվել է ՀՀ գործընկեր երկրների հետ փոխշահավետ առևտրի ներուժն ու նախանշվել դրա լիարժեք իրացման ուղիները:
2. Արտահանվող ապրանքների արժեքի և բեռնափոխադրումների ծախսերի դինամիկայի ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են ԵԱՏՄ և տարածաշրջանի երկրների լոգիստիկ շղթաների արդյունավետության բարձրացման և մրցունակության խթանման ուղիները, որի շրջանակներում հիմնավորվել է միջտարածաշրջանային լոգիստիկ կենտրոն ստեղծելու անհրաժեշտությունը:
3. Տնտեսաչափական մոդելների կիրառմամբ գնահատվել է լոգիստիկ արդյունավետության համաթվի և դրա բաղադրիչների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի տեմպերի վրա ու բացահայտվել առկա փոխառնչությունները:
4. Գրավիտացիոն մոդելի միջոցով գնահատվել է հայ-թուրքական սահմանի բացման ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, մասնավորապես, բացահայտվել է բաց սահմանով Թուրքիայից Հայաստան ներմուծման և Հայաստանից Թուրքիա արտահանման ծավալների հնարավոր փոփոխությունները:

Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրների վերաբերյալ կատարված հետազոտությունը և դրան առնչվող քանակական չափումները կարող են օգտակար լինել տնտեսական քաղաքականության հիմնախնդիրները ձևակերպելու տեսանկյունից: Աշխատանքի արդյունքները կարող են հիմք հանդիսանալ արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության բարձրացմանն ուղղված քաղաքականություն մշակելու համար, իսկ ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են կիրառական նշանակություն ունենալ նաև հիմնախնդիրն ուսումնասիրող տնտեսագետների, պետական կառավարման մարմինների արտաքին տնտեսական հարաբերությունների գծով պատասխանատուների, ոլորտին առնչվող մասնավոր կառույցների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց համար:

Միևնույն ժամանակ, ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրություններն ու վերլուծությունները զերծ չեն թերություններից, այդ առնչությամբ կատարված դիտողությունները պետք է արժանանան հեղինակի

ուշադրությանը՝ քննարկվող թեմայով հետագա ուսումնասիրությունները շարունակելու դեպքում: Այսպես՝

- Նախ, ատենախոսության 2.2.՝ «ՀՀ արտաքին առևտրի և լոգիստիկ համակարգի առկա վիճակի ուսումնասիրությունը» բաժնում կարևորում ենք նաև արտաքին առևտի և լոգիստիկ ներուժի փոխառնչության ուսումնասիրությունը, որի նպատակը պետք է լիներ ՀՀ, այսպես կոչված, լոգիստիկ տարողունակության բացահայտումը:
- Ատենախոսության էջ 57-ում ներկայացված հետևյալ միտքը՝ «Հայաստանում առկա են արտահանման կարողություններն ու տնտեսական աճը սահմանափակող բոլոր հնարավոր խոչընդոտները՝ սահմանափակ ռեսուրսներ, բարձր տրանսպորտային ծախսեր, ծովային ելքի բացակայություն, շրջափակման ենթարկված ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքներ, խորհրդային տարիներից ժառանգած տնտեսական համակարգ և այլն» «»նախնադարյան տրամաբանության մեջ է: Եվրոպական 12 երկրներ ևս ծովային ելք չունեն, հանքահումքային հարուստ ռեսուրսների չեն տնօրինում և այլն, և այլն: Ժամանակակից աշխարհը զարգանում է տեխնոլոգիական հիմքի վրա, որտեղ խոչընդոտներ գոյություն չունեն, որտեղ հաղթում է տնտեսության օպտիմալ և արդյունավետ կառավարումը: Անբանների և ապաշնորհների քաղաքականությունը չի կարող տնտեսական առաջընթացը խոչնդոտող գաղափարախոսության վերածվել: Միշտ էլ կարելի է արդյունավետ կառավարման և կազմակերպման շնորհիվ մեղմել կամ վերացնել ցանկացած խոչընդոտ:
- Հետևյալ (էջ 60)՝ «ՀՀ արտաքին առևտրի առանձնահատկությունները հասկանալու, արտաքին առևտրի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար դիտարկվել են ՀՀ արտահանումը, ներմուծումը, առևտրային հաշվեկշիռն ու ապրանքաշրջանառությունը 2010-2022 թթ» նպատակը համոզիչ չի ձևակերպված: Այդ վերլուծությունը պետք էր բացատրել՝ ելնելով լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացման հիմնավորման անհրաժեշտությունից: Հակառակ դեպքում, այն կտրվում է Հետազոտության նպատակից: Հիմնավորումն ունի հստակեցման կարիք:
- Համաշխարհային բանկի խումբը, որպես կանոն, լոգիստիկ արդյունավետության համաթվի գնահատումներն իրականացնում է հիմնվելով տեղեկատվության երկու աղբյուրի վրա. առաջնային հարցում աշխարհի մակարդակով տեղերում աշխատող լոգիստիկայի մասնագետների շրջանում, ովքեր տրամադրում են տեղեկություններ այն երկրների վերաբերյալ, որտեղ նրանք աշխատում են և որոնց հետ առևտուր են անում, ինչպես նաև օգտագործում են մատակարարման շղթայի հիմնական տարրերի արդյունավետության վերաբերյալ քանակական տվյալները, ինչպիսիք են ժամանակը, ծախսերը, ապրանքների ներմուծման և արտահանման համար անհրաժեշտ ընթացակարգերը: Կարծում ենք, ավելի գործնական, առաջնային տեղեկատվություն ՀՀ լոգիստիկ իրավիճակի մասին կարելի էր ստանալ տեղացի փորձագետների շրջանում հարցումներ կատարելու հիման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները, գիտական վերլուծության առումով դրանք կարելի է դիտարկել որպես ոչ էական, սակայն ընդունելի՝ հեղինակի կողմից հետագա գիտական ուսումնասիրությունները շարունակելու առումով:

Տիգրան Սամվելի Միքայելյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտական և գործնական կարևոր նշանակություն, ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում ակնհայտ դրսևորվում է հեղինակի ինքնուրույն և տրամաբանական կուռ հետևողականությամբ հետազոտություն կատարելու ունակությունը: Ատենախոսությունը վկայում է հեղինակի մասնագիտական և վերլուծական բարձր մակարդակի, արժեքավոր վերլուծություն կատարելու հմտությունների մասին:

Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության հիմնական արդյունքներն ամփոփվել են հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական հոդվածներում և մեկ մենագրությունում: Հետազոտության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի նիստերում, ինչպես նաև մի շարք գիտաժողովներում և կլոր սեղաններում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Ռիգայի ՌԻՍԵԲԱ համալսարանում (Լատվիա), Մոսկվայի ազգերի բարեկամության համալսարանում (Ռուսաստանի Դաշնություն), Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանում (Ռուսաստանի Դաշնություն) և այլն:

Տիգրան Սամվելի Միքայելյանի «Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը՝ ներկայացված Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման» կարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ԲԿԳԿ կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող այլ պահանջներին, ուստի հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Գրախոսող՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Զ. Ա. Թադևոսյան**

Զ.Ա.Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

18.06.2024 թ.